ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ՝ Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի միասնական երթուղիների համար՝

Հ/Հ	ԵՐԹՈՒՂՈՒ				
	անվանումը և համարը	սկզբնակետը	վերջնակետը	տեսակը	Սպասարկման համար պահանջվող ավտոբուսների քանակը (ներառյալ պահուստային և հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված ավտոբուսների քանակը)
1.	գ.Հուշակերտ-Արմավիր	գ.Հուշակերտ	Արմավիր	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	2
2.	գ.Բերքաշատ-Արմավիր	գ.Բերքաշատ	Արմավիր	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	1
3.	գ.Շենիկ-Արմավիր	գ.Շենիկ	Արմավիր	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	1
4.	գ.Վարդանաշեն-Արմավիր	գ.Վարդանաշեն	Արմավիր	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	1
5.	գ.Արգինա-Արմավիր	գ.Արգինա	Արմավիր	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	1
6.	գ.Երվանդաշատ-Արմավիր	գ.Երվանդաշատ	Արմավիր	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	1
7.	գ.Խանջյան-Արմավիր	գ.Խանջյան	Արմավիր	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	1
8.	Արմավիր-գ.Մարգարա-Վաղարշապատ	գ.Մարգարա	Արմավիր	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	1
9.	գ.Փշատավան-Արմավիր	գ.Փշատավան	Արմավիր	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	2

10.	գ.Արտաշար-Արմավիր	գ.Արտաշար	Արմավիր	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	1
11.	Երևան-Արմավիր	Երևան	Արմավիր	Ավտոբուս մինչև 30 նստատեղ	16
12.	Արմավիր-Արթիկ	Արմավիր	Արթիկ	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	1
13.	Արմավիր-Գյումրի	Արմավիր	Գյումրի	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	1
14.	Արմավիր-Վաղարշապատ	Արմավիր	Վաղարշապատ	Ավտոբուս Մինչև 30 նստատեղ	1
					31 փաստացի + 5 պահուստային

ՑԱՆԿ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ N2 ձևի
2. * Ավտոբուսների գրացման վկայագիր (ժամանակավոր կտրոն):
3. * Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:
4. * Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:
5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:
6. Հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրելու նպատակով վերասարքավորված ավտոբուսների համար լիազոր մարմնի կողմից տրամադրված վերասարքավորման մասին թույլտվության մասին որոշում:
7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Փաթեթների բացման օրը, ժամը և վայրը՝ 2021 թվականի նոյեմբերի 5, ժամը 11:00, ք. Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2021 թվականի նոյեմբերի 9, ժամը 11:00, Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնք, Երևան-Սևան ավտոմայրուղի, 2/14 շենք

Հայտը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը՝ 2021 թվականի նոյեմբերի 2, մինչև 17:00, ք. Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ նստատեղեկություն ստանալու համար՝ 010511356

Էլեկտրոնային փոստի հասցեն՝ **mtai.secretariat@gmail.com**

Մրցույթին ներկայացվող ավտոբուսների ընդհանուր թվի առնվազն 10%-ը պետք է հարմարեցված լինեն հաշմանդամների (տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց) նստեցման և իջեցման համար:

Մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների համաձայն:

**Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում*

Հայտ-պարտավորագրով մասնակցելու դեպքում Կարգի 22. 1 կետի պահանջներին համապատասխան անհրաժեշտ է ստորև նշված հաշվեհամարին մինչև 2021 թվականի նոյեմբերի 8-ը ժամը 12:00 փոխանցել սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումար՝

Հ/Հ 900008000730